



Ի. ՍՏԱԼԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱ-
ՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱ-
ՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ




ՊԵՏԼՐՈՍ ԴԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1939

Ի. ՍՏԱԼԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Հոկտեմբերի տասնամյակի առթիվ



ՊԵՏԶՐԱՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1988

И. СТАЛИН
МЕЖДУНАРОДНЫЙ ХАРАКТЕР
ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ

Армгиз—Издательство

полит. литературы

Ереван, 1938



11-289159r

Հոկտեմբերյան հեղափոխությունն «ազգային շրջանակներով» հեղափոխություն չէ միայն: Նա, ամենից առաջ, ինտերնացիոնալ, համաշխարհային կարգի հեղափոխություն է, վորովհետև նա մարդկության համաշխարհային պատմության մեջ արմատական շրջադարձ է նշանակում՝ հին, կապիտալիստական աշխարհից դեպի նոր, սոցիալիստական աշխարհը:

Հեղափոխություններն անցյալում սովորաբար նրանով էին վերջանում, վոր շահագործողների մի խումբ կառավարման դեկի մոտ փոխարինվում էր շահագործողների մի այլ խմբով: Շահագործողները փոխվում էին, շահագործումը՝ մնում: Այսպես է յեղել բանը ստրուկների ազատագրական շարժումների ժամանակ: Այսպես է յեղել բանը ճորտերի ապստամբությունների շրջանում: Այսպես է յեղել բանը հայտնի «մեծ» հեղափոխությունների շրջանում Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում: Յես չեմ խոսում Փարիզի Կոմունայի մասին, վորը յեղել է պրոլետարիատի առաջին, փառապանծ, հերոսական, բայց և այնպես անհաջող փորձը՝ պատմությունը կապիտալիզմի դեմ դարձնելու:

Հոկտեմբերյան հեղափոխությունն այդ հեղափոխություններից սկզբունքորեն է տարբերվում: Նա իրեն նպատակ է դնում վո՛չ թե շահագործման մի ձևը շահագործման մի այլ ձևով, շահագործողների մի խումբը շահագործողների մի այլ խմբով փոխարինելը, այլ մարդու կողմից մարդու ամեն մի շահագործում վո՛չնչացնելը, բոլոր և ամեն տեսակի շահագործող խմբերը վո՛չնչացնելը, պրոլետարիատի դեկտատուրա հաստատելը, մինչև այժմ դոյու-

թյուն ունեցած ճնշված բոլոր դասակարգերից ամենահեղափոխական դասակարգի իշխանությունը հաստատելը, սոցիալիստական անդամակարգ նոր հասարակություն կազմակերպելը:

Հենց այս պատճառով էլ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթույթյունն արմատական բեկում է նշանակում մարդկության պատմության մեջ, արմատական բեկում՝ համաշխարհային կապիտալիզմի պատմական ճակատագրում, արմատական բեկում՝ համաշխարհային պրոլետարիատի ազատագրական շարժման մեջ, արմատական բեկում՝ ամբողջ աշխարհի շահագործվող մասսաների պայքարի յեղանակների ու կազմակերպման ձևերի մեջ, կենցաղում ու տրադիցիաներում, կուլտուրայի ու գաղափարախոսության մեջ:

Սրանումն է այն բանի հիմքը, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունն ինտերնացիոնալ, համաշխարհային կարգի հեղափոխություն է:

Սրանումն է նույնպես այն խորը համակրանքի արձատքը, վոր տածում են դեպի Հոկտեմբերյան հեղափոխությունը բոլոր յերկրների ճնշված դասակարգերը՝ նրա մեջ տեսնելով իրենց ազատագրման գրավակները:

Կարելի է կլիներ նշել մի շարք հիմնական հարցեր, վորոնց դժով ընթանում է Հոկտեմբերյան հեղափոխության ներգործությունը հեղափոխական շարժման գարգացման վրա ամբողջ աշխարհում:

1. Հոկտեմբերյան հեղափոխությունը, ամենից առաջ, նրանով է նշանավոր, վոր նա ճեղքեց համաշխարհային իմպերիալիզմի ճակատը, տապալեց իմպերիալիստական բուրժուազիային կապիտալիստական ամենամեծ յերկրներից մեկում և իշխանության գլուխ կանգնեցրեց սոցիալիստական պրոլետարիատին:

Վարձվողների դասակարգը, հալածվածների դասակարգը, ճնշվածների ու շահագործվողների դասակարգը մարդկության պատմության մեջ առաջին անգամ բարձրացավ մինչև իշխող դասակարգի գրություն՝ իր որինակով վարակելով բոլոր յերկրների պրոլետարներին:

Այս նշանակում է, վոր Հոկտեմբերյան հեղափոխու-

թյունը բաց արեց իմպերիալիզմի յերկրներում նոր դարաշրջան, պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը կալվածատերերի ու կապիտալիստների ձեռքից վերցրեց արտադրության գործիքներն ու միջոցները և դարձրեց հասարակական սեփականություն՝ հակադրելով, այսպիսով, բուրժուական սեփականությանը սոցիալիստական սեփականությունը: Հենց սրանով էլ նա մերկացրեց կապիտալիստների սուտն այն մասին, թե բուրժուական սեփականությունն անձեռնմխելի, սրբազան, հավիտենական է:

Նա իրեց բուրժուազիայից իշխանությունը, զրկեց բուրժուազիային քաղաքական իրավունքներից, կործանեց բուրժուական պետական ապարատը և հանձնեց իշխանությունը խորհուրդներին, այսպիսով, բուրժուական պառլամենտարիզմին՝ վորպես կապիտալիստական դեմոկրատիայի՝ հակադրելով խորհուրդների սոցիալիստական իշխանությունը՝ վորպես պրոլետարական դեմոկրատիա: Լաֆարգն իրավացի յեր, յերբ նա գեռես 1887 թ. առում եր, թե հեղափոխության հենց հետևյալ որը «նախկին բոլոր կապիտալիստները կզրկվեն ընտրական իրավունքներից»: Հոկտեմբերյան հեղափոխությունը հենց սրանով մերկացրեց սոցիալ-դեմոկրատների սուտն այն մասին, թե այժմ հնարավոր է խաղաղ անցումը սոցիալիզմին բուրժուական պառլամենտարիզմի միջոցով:

Բայց Հոկտեմբերյան հեղափոխությունը կանգ չառավ և չեք էլ կարող կանգ առնել սրա վրա: Քանզիով հինը, բուրժուականը, նա ձեռնամուխ յեղավ կառուցելու նորը, սոցիալիստականը: Հոկտեմբերյան հեղափոխության տասը տարին՝ կուսակցության, արհմիությունների, խորհուրդների, կոոպերացիայի, կուլտուրական կազմակերպությունների, տրանսպորտի, արդյունաբերության, կարմիր բանակի կառուցման տասը տարին է: ԽՍՀՄ-ի մեջ չինտրարության ճակատում սոցիալիզմի ունեցած անկասկածելի հաջողություններն ակներևորեն ցույց տվին, վոր պրոլետարիատը կարող է հաջողությամբ յերկիր կառավարել՝ առանց բուրժուազիայի և ընդդեմ բուրժուազիայի, վոր

նա կարող է հաջողութեամբ կառուցել արդյունաբերութիւն՝ առանց բուրժուազիայի և ընդդէմ բուրժուազիայի, վոր նա կարող է հաջողութեամբ ղեկավարել ամբողջ ժողովրդական տնտեսութիւնը՝ առանց բուրժուազիայի և ընդդէմ բուրժուազիայի, վոր նա կարող է հաջողութեամբ սոցիալիզմ կառուցել՝ չնայած կապիտալիստական շրջապատմանը: Հին «թեորիան» այն մասին, թե ինչպէս վոր գլուխն ու ժարմնի այլ մասերը չեն կարող կառավարվել առանց ստամոքսի, այնպէս ել չահագործողները չեն կարող կառավարվել առանց շահագործողների, միմիայն հնազարի պատմութեան հոմեական հայտնի սենատոր Մենենիոս Ագրիպպայի սեփականութիւնը չէ: Այդ «թեորիան» ներկայումս հանդիսանում է սոցիալ-դեմոկրատիայի քաղաքական «փիլիսոփայութեան» անկյունաքարը՝ ընդհանրապէս, իմպերիալիստական բուրժուազիայի հետ կռաւի-ցիա կազմելու՝ սոցիալ-դեմոկրատական քաղաքականութեան անկյունաքարը՝ առանձնապէս: Այդ «թեորիան», վոր ստացել է նախապաշարմունքի բնույթ, կապիտալիստական յերկրների պրոլետարիատին հեղափոխականացնելու ճանապարհին ընկած ամենալուրջ արգելքներից մեկն է ներկայումս: Հոկտեմբերյան հեղափոխութեան կարեւորագոյն հետեանքներից մեկն այն փաստն է, վոր նա այդ սուտ «թեորիային» մահացու հարված հասցրեց:

Ել արդյոք պետք կա՞ սպացուցելու, վոր Հոկտեմբերյան հեղափոխութեան այդ և դրանց նման հետեանքները չեյին կարող և չեն կարող մնալ ստանց լուրջ ազդեցութեան կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի հեղափոխական շարժման վրա:

Այնպիսի հանրաժանութ փաստեր, ինչպիսիք են՝ կոմունիզմի առաջնիւթաց շարժման ծավալումը կապիտալիստական յերկրներում, ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի նկատմամբ բոլոր յերկրների պրոլետարների ունեցած համակրանքի աճումը, վերջապէս, բանվորական պատվիրակութիւնների հոսանքը դեպի Խորհուրդների յերկիրը՝ անտարակուսելիորեն խոսում են այն մասին, վոր Հոկտեմբերյան հեղափոխութեան զգած սերմերն արդեն սկսում են պտուղներ տալ:

2. Հոկտեմբերյան հեղափոխութիւնը սասանեցրեց իմպերիալիզմը վոչ միայն նրա տիրապետութեան կենտրոններում, վոչ միայն «մետրոպոլիտաններում»: Նա հարվածեց իմպերիալիզմի թիկունքներին ել, նրա պերիֆերիային ել՝ խարխելով իմպերիալիզմի տիրապետութիւնը գաղութային ու կախյալ յերկրներում:

Հոկտեմբերյան հեղափոխութիւնը, սապալելով կալվածատերերին ու կապիտալիստներին, փչրեց ազգային-գաղութային ճնշման շղթաները և այդ ճնշումից ազատագրեց լայնատարած պետութեան առանց բացառութեան բոլոր ճնշված ժողովուրդներին: Պրոլետարիատը չի կարող ազատագրել իրեն՝ չազատագրելով ճնշված ժողովուրդներին: Հոկտեմբերյան հեղափոխութեան բնորոշ գիծն այն փաստն է, վոր նա ԽՍՀՄ-ի մեջ այդ ազգային-գաղութային հեղափոխութիւնները կենսագործեց վո՛չ թե ազգային թշնամութեան ու ազգամիջյան ընդհարումների դրոշի ներքո, այլ ԽՍՀՄ-ի ազգութիւնների բանվորների ու գյուղացիների փոխադարձ վստահութեան ու յեղբայրական մերձեցման դրոշի ներքո, վո՛չ թե հանուն նացիոնալիզմի, այլ հանուն ինտերնացիոնալիզմի:

Հենց այն պատճառով, վոր ազգային-գաղութային հեղափոխութիւնները մեզանում կատարվեցին պրոլետարիատի ղեկավարութեամբ ու ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո, հենց այդ պատճառով ել պարիա-ժողովուրդները, ստրուկ-ժողովուրդները, մարդկութեան պատմութեան մեջ առաջին անգամ բարձրացան իրոք վոր ազատ և իրոք վոր հալածար ժողովուրդների դրութեան՝ վարակելով իրենց որինակով համայն աշխարհի ճնշված ժողովուրդներին:

Այս նշանակում է, վոր Հոկտեմբերյան հեղափոխութիւնը նոր դարաշրջան է բաց արել, դարաշրջան գաղութային հեղափոխութիւնների, վորոնք կենսագործվում են աշխարհի մեջված յերկրներում պրոլետարիատի հետ դաշնակցած, պրոլետարիատի ղեկավարութեամբ:

Առաջներում «ընդունված էր» կարծել, թե աշխարհն սկզբից ի վեր բաժանված է յեղել ստորին ու վերին դասաների, սեւերի ու սպիտակների, վորոնցից առաջններն անընդունակ են քաղաքակրթութեան և դատապարտված են

շահագործման առարկա լինելու, իսկ յերկրորդները հանդի-
սանում են քաղաքակրթության միակ կրողները, վերոնք
կոչված են առաջիններին շահագործելու: Այժմ այդ առա-
պելը պետք է համարել ջախջախված ու դեն չպրտված:
Հոկտեմբերյան հեղափոխութեան կարեւորագույն հետեանք-
ներից մեկն այն փաստն է, վոր նա այդ առասպելին մահա-
ցու հարված հասցրեց՝ գործով ցույց տալով, վոր խորհրդ-
դային զարգացման հունը ներքաշված աղատադրված վոչ-
յնվորդական ժողովուրդներն ամենեւին ել ավելի պակաս
ընդունակ չեն առաջ շարժելու իրոք առաջավոր կուլտու-
րան ե իրոք առաջավոր քաղաքակրթութիւնը, քան յեվրո-
պական ժողովուրդները:

Առաջներում «ընդունված եր» կարծել, թե ճշգրիտ ժո-
ղովուրդների ազատագրման միակ մեթոդը բուրժուական
նացիոնալիզմի մեթոդն է, ազգերը միմյանցից անջատվի-
լու մեթոդը, նրանց միմյանցից բաժանելու մեթոդը, տար-
բեր ազգերի աշխատավորական մասսաների միջև ազդային
թշնամութիւնն ուժեղացնելու մեթոդը: Այժմ այդ առա-
պելը պետք է համարել տապալված: Հոկտեմբերյան հեղա-
փոխութեան կարեւորագույն հետեանքներից մեկն այն փա-
ստն է, վոր նա այդ առասպելին մահացու հարված հասցը-
րեց՝ գործով ցույց տալով ճշգրիտ ազգերի ազատագրման
պրոլետարական, ինտերնացիոնալական մեթոդի՝ վորպէս
միակ ճիշտ մեթոդի՝ հնարավորութիւնն ու նպատակա-
հարմարութիւնը, գործով ցույց տալով ամենատարբեր ժո-
ղովուրդների բանվորների ու գյուղացիների յեղբայրական
դաշինքի հնարավորութիւնն ու նպատակահարմարութիւ-
նը՝ հոծարականութեամբ ու ինտերնացիոնալիզմի հիմունք-
ներով: Այս բանի ուղղակի ապացույց չի կարող չժառա-
յել ինտերգային Սոցիալիստական Հանրապետութիւնների
Միութեան գոյութիւնը, Միութեան, վորը հանդիսանում է
բոլոր յերկրների աշխատավորների ապագա միավորման
նախատիպարը համաշխարհային միասնական տնտեսութեան
մէջ:

Ինչ խոսք, վոր Հոկտեմբերյան հեղափոխութեան այս
և սրանց նման հետեանքները չեյին կարող ե չեն կարող
մնալ առանց լուրջ ազդեցութիւն ունենալու գաղութային

ու կախյալ յերկրների հեղափոխական շարժման վրա: Այս
մասին են անկասկածելորեն խոսում այնպիսի փաստեր,
ինչպիսիք են՝ ճշգրիտ ժողովուրդների հեղափոխական
շարժման աճումը Չինաստանում, Ինդոնեզիայում, Հնդկ-
կաստանում ե այլն ե այս յերկրների ժողովուրդների հա-
մակրանքի աճումը գեպի ԽՍՀՄ:

Գաղութների ու կախյալ յերկրների անխոռվ շահա-
գործման ու ճնշման դարաշրջանն անցավ:

Հասել է ազատագրական հեղափոխութեանն զա-
րազրուխր գաղութներում ու կախյալ յերկրներում, այս
յերկրների պրոլետարիատի զարթոնքի դարաշրջանը, հե-
ղափոխութեան մեջ նրա եկեղեցական դարաշրջանը:

3. Գիցելով հեղափոխութեան սեւեռներն ինչպէս իմպե-
րիալիզմի կենտրոնները, այնպէս նաև նրա թիկունքները,
թուլացնելով իմպերիալիզմի հզորութիւնը «մեքսիկոյի-
աներում» ե սասանեցնելով նրա տիրապետութեանը գա-
ղութներում, — Հոկտեմբերյան հեղափոխութեանը հենց
սրանով հարցականի տակ է դրել ամբողջութեամբ վերցրած
համաշխարհային կապիտալիզմի բուն իսկ գոյութիւնը:

Յեթե կապիտալիզմի տարբերային զարգացումն իմպե-
րիալիզմի պայմաններում, — այդ զարգացման անհամապատ-
շափութեան պատճառով, կոնֆլիկտների ու պատերազմա-
կան ընդհարումների անխուսափելիութեան պատճառով,
վերջապես, իմպերիալիստական շտեմոված սպանդի պատ-
ճառով, — վերահեղ ե կապիտալիզմի «նեխման» ու «մահաց-
ման» պրոցեսի, այսպէս Հոկտեմբերյան հեղափոխութեանն
ու նրա հետ կապված՝ հսկայական յերկրի անջատվելը կա-
պիտալիզմի համաշխարհային սխտեմից չեյին կարող չա-
րազացնել այդ պրոցեսը, քայլ առ քայլ վողողելով՝ սրբե-
լով համաշխարհային իմպերիալիզմի բուն հիմունքները:

Դեռ ավելին: Հոկտեմբերյան հեղափոխութեանը, սա-
տանեցնելով իմպերիալիզմը՝ դրա հետ միասին հանձին
պրոլետարական առաջին դիկտատուրայի ստեղծեց համաշ-
խարհային հեղափոխական շարժման մի հզոր ու բացորո-
քազ, վորը նա առաջներում յերբեք չի ունեցել ե վաղի վրա
նա այժմ կարող է հենվել: Հոկտեմբերյան հեղափոխու-
թիւնն ստեղծեց համաշխարհային հեղափոխական շարժ-

ման այն հղոր ու բացորոշ կենտրոնը, վոր առաջնորդում
յերթեթի չի անեցել այդ շարժումը և վորի շուրջը նա այժմ
կարող և համախմբվել՝ կազմակերպելով բոլոր յերկրնե-
րի պրոլետարների ու մեշված ժողովուրդների հեղափոխա-
կան միասնական մակատ ընդդեմ իմպերիալիզմի:

Այս ամենից առաջ նշանակում է, վոր Հոկտեմբերյան
հեղափոխությունը համաշխարհային կապիտալիզմին մա-
հացու մերթ է հասցրել, վորից նա ե՛լ յերթեք վտար չի
կանգնել: Հենց այս պատճառով ել կապիտալիզմն այլևս յեր-
թեք չի վերադարձնել իրեն այն «հավասարակշռությունը» և
այն «կայունությունը», վոր նա ուներ մինչև Հոկտեմբերը:
կապիտալիզմը կարող է մասնակի կայունանալ, նա կարող է
ուսցիտնալացնել իր արտադրությունը, յերկրի կառավարու-
թյունը հանձնել ֆաշիզմին, ժամանակավորապես ճնշել բան-
վոր դասակարգին, բայց նա յերթեք չի վերադարձնել իրեն
այն «անդորրությունն» ու այն «վստահությունը», այն «հա-
վասարակշռությունն» ու այն «կայունությունը», վորոնցով
նա պճնամովում էր առաջ, վորովհետև համաշխարհային
կապիտալիզմի ճգնաժամը դարձացման մի այնպիսի աստի-
ճանի յե հասել, յերթ հեղափոխության կրակներն անխու-
սափելիորեն պետք է բռնկվեն մերթ իմպերիալիզմի կենտ-
րոններում, մերթ պերիֆերիայում՝ ի չիք դարձնելով կա-
պիտալիստական կարկատանները և որեցոր մոտեցնելով
կապիտալիզմի անկումը: Իսկ և իսկ ինչպես վոր հայտնի
առաջի մեջ է. «սուրբ դուրս պրծացրեց՝ քիթը խրվեց,
քիթը դուրս պրծացրեց՝ պոչը խրվեց»:

Յերկրորդ, այս նշանակում է, վոր Հոկտեմբերյան հե-
ղափոխությունը վորոշ բարձրության հասցրեց ամբողջ
աշխարհի ճնշված դասակարգերի ուժն ու տեսակարար կշի-
ռը, արթությունն ու մարտական պատրաստականությունը՝
հարկադրելով տիրապետող դասակարգերին, վոր հաշվի
նստեն նրանց հետ, իբրև, նոր, լուրջ գործոնի հետ: Այժմ
աշխարհի աշխատավորական զանգվածներն այլևս չի կարե-
լի դիտել վորպես մի «կույր ամբոխ», վորը խարխալում է
մթություն մեջ և զուրկ է հեռանկարներից, վորովհետև
Հոկտեմբերյան հեղափոխությունը նրանց համար ստեղծեց
մի փարոս, վորը լուսավորում է նրանց ճանապարհը և հե-

ռանկարներ է տալիս: Յեթե առաջներում չկար մի համաշ-
խարհային բաց Փորում, վորտեղից կարելի լիներ ցու-
ցադրել և ձևավորել ճնշված դասակարգերի ակնկա-
յություններն ու ձգտումները, ապա այժմ այդպիսի
Փորում կա հանձին առաջին պրոլետարական դեկտատու-
րայի: Հաղիվ թե կարելի յե կասկածել, վոր այդ Փորումի
վոչնչացումն «առաջափնի յերկրների» հասարակական-քա-
ղաքական կյանքը յերկար ժամանակով կծածկեր անգուսպ
սև ռեակցիայի խավարով: Չի կարելի ժխտել այն, վոր
«բուլճեիկյան պետություն» դոյություն սոսկական փաստն
անդամ սանձահարում է ռեակցիայի սև ուժերը՝ հեշտաց-
նելով ճնշված դասակարգերի պայքարն իրենց ազատագրու-
ման համար: Հատկապես սրանով ել բացատրվում է այն
անասնական ատելությունը, վոր բոլոր յերկրների շահա-
գործողները տածում են դեպի բուլճեիկները: Կրկնվում է
պատմությունը, թեև նոր հիմքով: Ինչպես վոր առաջ,
փեռալիզմի անկման ժամանակաշրջանում, «յակոբին»
բառն էր բոլոր յերկրների արխատիկատների մեջ սարսափ
ու դարչանք առաջացնում, այնպես ել այժմ, կապիտալիզ-
մի անկման ժամանակաշրջանում, «բուլճեիկ» բառն է բուր-
ժուական յերկրներում սարսափ ու դարչանք առաջացնում:
Յեվ ընդհակառակը, ինչպես վոր առաջ Փարիզն էր հանդի-
սանում բարձրացող բուրժուազիայի հեղափոխական ներ-
կայացուցիչների համար պատասպարան ու դպրոց, այնպես
ել այժմ Մոսկվան է հանդիսանում բարձրացող պրոլետա-
րիատի հեղափոխական ներկայացուցիչների համար պատըս-
պարան ու դպրոց: Յակոբիններին ատելը ֆեոդալիզմին
չփրկեց կործանումից: Արդյոք կարելի՞ յե կասկածել, վոր
բուլճեիկներին ատելը չի փրկելու կապիտալիզմին նրա ան-
խուսափելի ջախջախումից:

Անցավ կապիտալիզմի «կայունության» դաքաղջանը՝
իր հետ տանելով բուրժուական կարգերի անհողողոյու-
թյան առասպելը:

Հասել է կապիտալիզմի կործանման դարադուրը:

4. Հոկտեմբերյան հեղափոխությունը միայն անտեսա-
կան ու հասարակական-քաղաքական հարաբերությունների
բնագավառում կատարված հեղափոխություն չէ: Նա միա-

ժամանակ հեղափոխություն և բանվոր դասակարգի մտքերի մեջ, հեղափոխություն և նրա դադարաբախտության մեջ: Հոկտեմբերյան հեղափոխությունը ծնվեց ու ամրապնդվեց մարքսիզմի դրոշի ներքո, պրոլետարիատի դիկտատուրայի դադարաբախտի դրոշի ներքո, լենինիզմի, վոլոժինիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի մարքսիզմն է: Նա այս պատճառով նշանավորում է մարքսիզմի հաղթությունն ընդդեմ ուղիղիզմի, լենինիզմի հաղթությունն՝ ընդդեմ սոցիալ-դեմոկրատիզմի, III Ինտերնացիոնալի հաղթությունն՝ ընդդեմ II Ինտերնացիոնալի:

Հոկտեմբերյան հեղափոխությունն անանցանելի ակոսքալեց մարքսիզմի ու սոցիալ-դեմոկրատիզմի միջև, լենինիզմի քաղաքականության ու սոցիալ-դեմոկրատիզմի քաղաքականության միջև: Առաջներում, մինչև պրոլետարիատի դիկտատուրայի հաղթությունը, սոցիալ-դեմոկրատիան կարող էր պնդում օրվել մարքսիզմի դրոշով՝ բացորոշ չփոխելով պրոլետարիատի դիկտատուրայի դադարաբախտը, բայց և վոլոժինիզմ, բացարձակապես վոլոժինիզմ չանելով՝ այն բանի համար, վոլոժինիզմը այդ դադարաբախտի իրադրությունը, վոլոժինիզմի սոցիալ-դեմոկրատիայի աշակերտի վարքագիծը՝ վոլոժինիզմի ստանալիք չէր ստեղծում կապիտալիզմի համար: Այն ժամանակ, այն շրջանում սոցիալ-դեմոկրատիան ձևակալորեն ձուլվում էր կամ գրեթե ձուլվում էր մարքսիզմի հետ: Այժմ, պրոլետարիատի դիկտատուրայի հաղթությունից հետո, յերբ բոլորն ակներևորեն տեսան, թե ի՞նչ է տանում մարքսիզմը, և թե ի՞նչ կարող է նշանակել նրա հաղթությունը, սոցիալ-դեմոկրատիան այլևս չէր կարող պնդում օրվել մարքսիզմի դրոշով, չէր կարող կոկետություն անել պրոլետարիատի դիկտատուրայի դադարաբախտի հետ՝ առանց վորոշ վստահ ստեղծելու կապիտալիզմի համար: Սոցիալ-դեմոկրատիան, վաղուց խղելով կապը մարքսիզմի վոլոժինիզմի հետ, հարկադրված յեղավ կապը խզելու մարքսիզմի դրոշի հետ ել, բացորոշ ու աներկմիտ կերպով կանգնեց մարքսիզմի զավակի դեմ, Հոկտեմբերյան հեղափոխության դեմ, պրոլետարիատի՝ աշխարհումս առաջին դիկտատուրայի դեմ: Այժմ սոցիալ-դեմոկրատիան պետք է սահ-

մանաձուլվեր, և իրոք սահմանաձուլվեց մարքսիզմից, վորո՞շ հետե ներկա պայմաններում չի կարելի իրեն մարքսիստ անվանել՝ բացորոշ և անձնվիրաբար չալաչալանելով աշխարհի առաջին պրոլետարական դիկտատուրան, հեղափոխական պայքար չմղելով իր բուրժուազիայի դեմ, պայմաններ չստեղծելով պրոլետարիատի դիկտատուրայի հաղթության համար իր սեփական յերկրում: Սոցիալ-դեմոկրատիայի և մարքսիզմի միջև անգունդ է բացվել: Այսուհետև մարքսիզմի միակ կրողն ու պատվարը լենինիզմը, կոմունիզմն է:


Բայց բանը սրանով չսահմանափակվեց: Հոկտեմբերյան հեղափոխությունը, սահմանաձուլվելով սոցիալ-դեմոկրատիային մարքսիզմից, ավելի առաջ դնաց՝ սոցիալ-դեմոկրատիային չպրոտելով աշխարհի առաջին պրոլետարական դիկտատուրայի դեմ կապիտալիզմն ուղղակի պաշտպանողների բանակը: Յերբ պ. պ. Ագլերներն ու Բաուերները, Վեյսերն ու Լեվինները, Լոնգեններն ու Բլյումները հայհոյում են «խորհրդային ուժի մեջ», գովաբանելով պառլամենտական «դեմոկրատիան», ապա դրանով նրանք ուզում են ասել, թե իրենք պայքարում են և պետք է պայքարեն կապիտալիստական կարգերը ի՞նչպե՞ս ուժով վերականգնելու համար, կապիտալիստական ստրկությունը «քաղաքակիրթ» պետություններում պահելու համար: Այժմյան սոցիալ-դեմոկրատիզմը կապիտալիզմի գաղափարային հեմարանն է: Լենինը հազար անգամ իրավացի յեր, յերբ ասում էր, թե սոցիալ-դեմոկրատական աշխարհի քաղաքականները «բուրժուազիայի իսկական դորձակալներն են բանվորական շարժման մեջ, կապիտալիստների դասակարգի բանվորական դորձակատարներն են», թե «պրոլետարիատի քաղաքացիական պատերազմում ընդդեմ բուրժուազիայի» նրանք անխուսափելիորեն կկանգնեն «վերսայցիների կողմն ընդդեմ կոմունարների»: Անհնարին է վերջ տալ կապիտալիզմին՝ առանց վերջ տալու սոցիալ-դեմոկրատիզմին բանվորական շարժման մեջ: Այս պատճառով՝ կապիտալիզմի մահացման դարաշրջանը սրա հետ միասին հանդիսանում է սոցիալ-դեմոկրատիզմի մահացման դարաշրջանը բանվորական շարժման մեջ: Հոկտեմբերյան հեղափոխության մեծ նշա-

նակութունն, ի մէջի այլոց, այն և, վոր նա նշանավորում է լենինիզմի անխուսափելի հաղթանակն բնդդեմ սոցիալ-դեմոկրատիզմի՝ համաշխարհային բանվորական շարժման մէջ:

Վերջացել է II ինտերնացիոնալի ու սոցիալ-դեմոկրատիզմի տիրապետութեան դարաշրջանը բանվորական շարժման մէջ:

Հասել է լենինիզմի ու III ինտերնացիոնալի տիրապետութեան դարաշրջանը:

«Правда» № 255,
6—7 նոյեմբերի 1927 թ.



Խմբագիր Բ. Մարտիրոսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Զիդեյան
Կոնսրուկ սրբագրիչ Լ. Արովյան

Դրավիտի լիազոր № Կ—3340, հրատ. № 618,
Պատվեր № 160, արժեք 5.000,
Հանձնվել է արտադրութեան 19/XI 1938 թ.
Ստորագրվել է տպագրելու 15/XII 1938 թ.
Ֆինը 15 Կ. կաղմը 30 Կ.

Պետհրատ—Փաղաքական գրականութեան
հրատարակչութեան տպարան
Տեքեան, Ալավերդյան № 65

10

ՀՀ Ազգային գրադարան



NL0928326

13 ФФВ. 1939

75

ԳԻՆԸ 45 Կ.

11

28915

И. СТАЛИН
МЕЖДУНАРОДНЫЙ ХАРАКТЕР
ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

126